## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2018 թվականի N 3-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30 -Ի ԹԻՎ 2-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 2-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 30-ի թիվ 2-րդ արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 30-ի 2-րդ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 74-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր կառուցվող (վերակառուցվող, վերանորոգվող) շենքերի և շինությունների տանիքների համար նախընտրելի գույներ սահմանելու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Աշոցքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-015-050-022 կադաստրային ծածկագրով 0.0827.82 հա համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր՝ Բավրա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Բավրայի մաքսային կետի կառուցման նպատակով նախատեսված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.92695, 0.59864, 0.92457 և 1.9433 հեկտար կառուցապատված հողամասերը հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող 4807,81 հա գյուղատնտեսական նշանակության հողերը օգտագործման նպատակով, բաց մրցույթով վարձակալության տրամադրելու, մեկնարկային վարձավճարը, ժամկետները և պայմանները հաստատելու մասին /զեկուցող Ա. Ալոյան/:
7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին:

| **Կողմ (8)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Վաղինակ Աբրեյան | | |
| Համլետ Գրիգորյան | | |
| Միշա Երանոսյան | | |
| Սրապ Հարությունյան | | |
| Արմեն Մարտիրոսյան | | |
| Հրանտիկ Մելիքյան | | |
| Մկրտիչ Սարգսյան | | |
| Գագիկ Սարիբեկյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆ**

2018 թվականի մարտի 30

գ. Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 4 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 74-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 74-Ն որոշման մեջ կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. «Համայնքի բյուջեի եկամուտները» հատված 1-ի հոդված 7421, 1342 տողում «3562.6» թիվը փոխարինել «3511.3» թվով:
2. Նույն հատվածի հոդված 7415, 1334 տողում «1800,0» թիվը փոխարինել «905,8» թվով:
3. Նույն հատվածի հոդված 7131, 1112 տողում «24182.5» թիվը փոխարինել «23596.8» թվով:
4. «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ի հոդված 4261, բաժին 01, խումբ 3, դաս 3, 2133 տողում «60.0» թիվը փոխարինել «71.3» թվով:
5. Նույն հատվածի հոդված 4891, բաժին 11, խումբ 1, դաս 2, 3112 տողում «30200.0» թիվը փոխարինել «27357.5» թվով:
6. Նույն հատվածի հոդված 5129, բաժին 01, խումբ 6, դաս 1, 2161 տողում «10000.0» թիվը փոխարինել «7256.0» թվով:

7. Նույն հատվածի  2451 տողում լրացնել 5121 հոդված, «2744.0» թիվ:
8. Նույն հատվածի 2421 տողում լրացնել 4239 հոդված «1300.0» թիվ:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վաղինակ Աբրեյան

Համլետ Գրիգորյան

Միշա Երանոսյան

Սրապ Հարությունյան

Արմեն Մարտիրոսյան

Հրանտիկ Մելիքյան

Մկրտիչ Սարգսյան

Գագիկ Սարիբեկյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 30
գ. Աշոցք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
**հասցե՝** 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
**հեռախոս՝** (0245)2-10-50, 2-14-82,
**էլ. փոստ՝** ashotsq.shirak@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2018 թվականի N 5- Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ) ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԱՐՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի փետրվարի 12-ի թիվ 01/16.1/762-18 հանձնարարականը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում /բնակավայրերում/ նոր կառուցվող (վերակառուցվող, վերանորոգվող) շենքերի և շինությունների տանիքների և արտաքին այլ տարրերի նկատմամբ միասնական պահանջներ /գունային լուծումներ/ համաձայն հավելվածի:

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վաղինակ Աբրեյան
Համլետ Գրիգորյան
Միշա Երանոսյան
Սրապ Հարությունյան
Արմեն Մարտիրոսյան
Հրանտիկ Մելիքյան
Մկրտիչ Սարգսյան
Գագիկ Սարիբեկյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԱԼՈՅԱՆ**

2018 թվականի մարտի 30
գ. Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2018 թվականի մարտի
30-ի թիվ 5-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ) ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՅԼ ՏԱՐՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ներդաշնակ ճարտարապետական տեսքն ապահովելու նպատակով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի մայիսի 30-ի N01/29.6/[407365]-17 հանձնարարականի ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, ուղղված Հայաստանի Հանրապետության բնակավայրերում շենքերի, շինությունների տանիքների ու արտաքին այլ տարրերի միասնական ճարտարապետական տեսքն ապահովելու ուղղությամբ: Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 1275-Ն որոշմամբ հաստատվել են համայնքի կողմից կառուցապատողներին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ՃՀԱ) ձևաթղթում լրացումները, որոնց համաձայն համայնքի ղեկավարը ՃՀԱ-ում պետք է նշի նախատեսվող կառույցի տանիքներին, ճակատներին և արտաքին այլ տարրերին ներկայացվող ճարտարապետական պահանջները, այդ թվում նաև գունային սահմանափակումները:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տարածքում որպես շինարարական նյութ արտաքին պատերի շարվածքների, երեսապատման, դեկորատիվ և այլ տարրերի համար հիմնականում կիրառվում են Հայաստանի տարածքում արդյունահանվող քարի տարբեր տեսակները (տուֆ, ֆելզիտային տուֆ, անդեզիտ, տրավերտին, մարմար, բազալտ, գրանիտ և այլն): Դրանով են պայմանավորված շենքերի ճակատների գունային լուծումները, քանի որ բնական քարի շարվածքը, ինչպես և բնական քարով երեսապատումը լրացուցիչ մշակումներ (սվաղ, ներկում) չեն պահանջում: Միաժամանակ շենքի ճակատների գույնը որոշիչ դեր պետք է ունենա տանիքի նյութը և գույնը որոշելու համար, ընդ որում, դեպքերի մեծամասնությունում, տանիքի գույնը գերադասելի է ընտրել պատից մուգ երանգների միջև: Բացառություն կարելի է համարել բնական կղմինդրե տանիքը, որը համահունչ է դիտվում և մուգ և բաց պատերի հետ:

Ճակատների, պատուհանների շրջանակների, դռների, պատշգամբների և տանիքների գունային լուծումները պետք է ներդաշնակ լինեն մեկը մյուսին և շրջակա միջավայրի բնական գունակազմությանը: Շենքերի հիմնական տարրերը

գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, վարդագույնի, կարմրաշագանակագույնի, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները: Որոշ դեպքերում՝ կոնտրաստային շեշտեր ստեղծելու նպատակով հնարավոր է նաև արհեստական վառ գույների կիրառումը՝ ժամանակավոր կառույցների, բարեկարգման առանձին տարրերի՝ նստարանների, աղբամանների, գովազդային վահանակների և այլ տարրերի համար:

## ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

| | Արթիկի տուֆ | Անիի տուֆ | Երևանի, Գյումրիի տուֆ | Գեղաքարի տուֆ | Մեծավանի տուֆ | Ձորագետի տուֆ |
|---|---|---|---|---|---|---|
| | վարդագույն | դեղին | սև, կարմիր | բաց վարդագույն, մարմնագույն | մուգ վարդագույն, կարմրավուն, մարմնագույն, դեղնավուն | աղյուսագույն, կարմրավուն |
| RGB | 229-184-183 | 244-176-131 | 74-68-42 | 242-219-218 | 221-131-131 | 241-153-93 |
| RGB | 217-149-148 | 239-151-91 | 64-58-62 | 237-205-203 | 208-84-84 | 186-73-28 |
| RGB | | 200-148-0 | 196-89-17 | 251-228-213 | 247-202-172 | 163-64-25 |
| | | | 182-66-2 | | 238-176-0 | |
| | **Բազալտ** | **Ֆելզիտ** | **Տրավերտին** | **Մարմար** | **Գրանիտ** | **Բետոն** |
| RGB | 191-191-191 | 225-251-247 | 255-246-225 | 235-245-255 | 213-220-228 | 201-201-201 |
| RGB | 174-170-170 | 255-242-204 | 202-140-16 | 245-255-235 | 172-185-202 | 123-123-123 |
| RGB | 118-113-113 | | | | 50-62-79 | 82-82-82 |
| | | | | | 173-61-80 | |
| | | | | | 53-97-95 | |

## ՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Շինանյութ** | Բնական և արհեստական կղմինդր , մետաղե թիթեղ, պրոֆիլ, պրոֆնաստիլ , այլ | | | | | |
| **Գունային ներկապնակ** | | | | | | |
| **ՀՀ մարզ**<br>**Տարածաշրջան**<br>**Քաղաք** | | | | | | |

| 1. ՇԻՐԱԿ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարածաշրջանները | RGB<br>RAL | 196-89-17<br>2004 | 211-93-81<br>2012 | 148-54-52<br>3001 | 99-36-35<br>3013 | 53-69-57<br>6006 | 52-47-36<br>6022 | 50-62-79<br>5011 |
| | | | | | | | | |
| Աշոցք | RGB<br>RAL | | 211-93-81<br>2012 | 148-54-52<br>3001 | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2018 թվականի N 6 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՇՈՑՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08- 015- 050- 022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0827.82 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրնսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնելու մասին» N 1731-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 02.2/468-18 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող Աշոցքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի (հասցեն՝ Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Գյումրու խճուղի, թիվ 5) պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-015-050-022 կադաստրային ծածկագրով 0.0827.82 հա համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (հետագայում անշարժ գույք) նվիրել Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս՝ Հայաստանի

Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (հետագայում՝ նվիրառու):

2. Համայնքի ղեկավար՝ Արթուր Ալոյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վաղինակ Աբրեյան

Համլետ Գրիգորյան

Միշա Երանոսյան

Սրապ Հարությունյան

Արմեն Մարտիրոսյան

Հրանտիկ Մելիքյան

Մկրտիչ Սարգսյան

Գագիկ Սարիբեկյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆ**

2018 թվականի մարտի 30

գ. Աշոցք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2018 թվականի N 7 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱՎՐԱ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԲԱՎՐԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.92695, 0.59864, 0.92457 ԵՎ 1.9433 ՀԵԿՏԱՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Բավրայի մաքսային կետի կառուցման նպատակով ձեռքբերված 0.92695, 0.59864, 0.92457 և 1.9433 հեկտար հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ N N 31012013-08-0218, 19022018-08-0013, 04022013-08-0332, 19022018-08-0016 (տրված 2013 թվականի փետրվարի 4-ին) գտնվում են մաքսակետի մաքսային հսկողության տարածքում և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 909-Ն որոշման և բնակավայրի կադաստրային քարտեզի, հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողամասեր, ուստի հողամասերի նպատակային նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում (բնակավայր՝ Բավրա) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, որով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր՝ Բավրա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Բավրայի

մաքսային կետի կառուցման նպատակով նախատեսված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 08-026-0119-0021, 08-026-0119-0025, 08-026-0119-0022, 08-026-0119-0026 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար՝ 0.92695, 0.59864, 0.92457 և 1.9433 հեկտար կառուցապատված հողամասերը փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա, այդ հողամասում կառուցված Բավրայի մաքսային կետի նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու և անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքները պետական գրանցման ենթարկելու նպատակով:

2. Համայնքի ղեկավար՝ Արթուր Ալոյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վաղինակ Աբրեյան
Համլետ Գրիգորյան
Միշա Երանոսյան
Սրապ Հարությունյան
Արմեն Մարտիրոսյան
Հրանտիկ Մելիքյան
Մկրտիչ Սարգսյան
Գագիկ Սարիբեկյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 30
գ. Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 մարտի 2018 թվականի N 8 – Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 4790.83 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող 4790.83 հա գյուղատնտեսական նշանակության հողերը օգտագործման նպատակով, բաց մրցույթով վարձակալության տրամադրել, այդ թվում՝

1) Աշոցք գյուղի տարածքում -943.62 հա, որից՝

ա. 876.41 հա արոտ, այդ թվում՝ 117-002 ծածկագրով 11.0 հա (3-րդ կարգ), 101-001 ծածկագրով 39.3 հա (3-րդ կարգ), 102-027 ծածկագրով 10.8 հա (3-րդ կարգ), 103-001 ծածկագրով 18.85 հա (3-րդ կարգ), 107-001 ծածկագրով 89.22 հա (3-րդ կարգ), 051-041 ծածկագրով 65.0 հա (3-րդ կարգ), 105-098 ծածկագրով 83.54 հա (3-րդ կարգ), 115-001 ծածկգրով 3.92 հա (3-րդ կարգ), 106-001 ծածկագրով 493 հա (5-րդ կարգ) և 107-001-001 ծածկագրով 46.58 հա (5-րդ կարգ), 109-001 ծածկագրով 15,2 հա (3-րդ կարգ),

բ. 56.88 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 057-001 ծածկագրով 0.83 հա (3-րդ կարգ), 065-001 ծածկագրով 0.2 հա (3-րդ կարգ), 067-019 ծածկագրով 2.01 հա (3-րդ կարգ), 105-017 ծածկագրով 2.99 հա (4-րդ կարգ), 105-066 ծածկագրով 2.98 հա (4-րդ կարգ), 106-001-006 ծածկագրով 5.7 հա (4-րդ կարգ), 107-043 ծածկգրով 0.28 հա (4-րդ կարգ), 122-002 ծածկագրով 0.22 հա (4-րդ կարգ), 122-004-001 ծածկագրով 1.32 հա (4-րդ կարգ), 131-001 ծածկագրով 7.42 հա (3-րդ կարգ),132-001 ծածկագրով 3.11 հա (2-րդ կարգ),
131-023 ծածկագրով 1.12 հա (3-րդ կարգ), 106-005 ծածկագրով 0.33 հա (4-րդ կարգ), 110-006 ծածկագրով 0.35 հա (3-րդ կարգ), 110-032 ծածկագրով 0,26 հա (3-րդ կարգ), 110-031 ծածկագրով 0.8 հա (3-րդ կարգ), 110-022 ծածկագրով 0.71 հա (3-րդ կարգ), 051-056 ծածկագրով 1.6 հա (3-րդ կարգ), 123-001 ծածկագրով 1.25 հա (3-րդ կարգ), 057-001 ծածկագրով 0.83 հա (2-րդ կարգ), 105-109 ծածկագրով 0.73 հա (4-րդ կարգ), 105-044 ծածկագրով 1.6 հա (4-րդ կարգ),

105-080 ծածկագրով 1.5 հա (4-րդ կարգ), 103-006 ծածկագրով 2.0 հա (4-րդ կարգ), 103-002 ծածկագրով 1.14 հա (4-րդ կարգ), 107-071 ծածկագրով 0.82 հա (4-րդ կարգ), 105-033 ծածկագրով 0.91 հա (4-րդ կարգ), 101-028 ծածկագրով 0.56 հա (3-րդ կարգ), 103-024 ծածկագրով 0.45 հա (3-րդ կարգ), 0107-0036 ծածկագրով 0,75հա (4-րդ կարգ), 0121-0083 ծածկագրով 0,96հա (3-րդ կարգ), 0118-0002 ծածկագրով 0,35հա (3-րդ կարգ), 0106-0113 ծածկագրով 0,75հա (4-րդ կարգ), 0121-0113 ծածկագրով 0,89հա (2-րդ կարգ), 123-031 ծածկագրով 0.67 հա (3-րդ կարգ), 105-048 ծածկագրով 1.16 հա (4-րդ կարգ), 131-014 ծածկագրով 0.5 հա (3-րդ կարգ),121-0073 ծածկագրով 1.81 հա (3-րդ կարգ), 105-068 ծածկագրով 0.92 հա (4-րդ կարգ), 131-003 ծածկագրով 1.3 հա (3-րդ կարգ), 011-007 ծածկագրով 0.43 հա (3-րդ կարգ), 105-045 ծածկագրով 1.0 հա (4-րդ կարգ), 107-007 ծածկագրով 0.87 հա (4-րդ կարգ), 121-087 ծածկագրով 0.5 հա (2-րդ կարգ),

գ. 10.33 հա խոտհարքներ, այդ թվում՝ 055-001-002-001 ծածկագրով 2.14 հա (3-րդ կարգ), 055-005 ծածկագրով 0.1 հա (3-րդ կարգ), 066-001 ծածկագրով 0.27 հա (3-րդ կարգ), 066-002 ծածկագրով 0.4 հա (3-րդ կարգ), 066-003 ծածկագրով 0.57 հա (3-րդ կարգ), 066-004 ծածկագրով 0.45 հա (3-րդ կարգ), 104-002 ծածկագրով 3.85 հա (3-րդ կարգ), 104-003 ծածկագրով 0.5 հա (3-րդ կարգ), 111-001-002 ծածկագրով 1.33 հա (3-րդ կարգ), 124-004 ծածկագրով 0.16 հա (3-րդ կարգ), 126-005 ծածկագրով 0.33 հա (3-րդ կարգ), 012-009 ծածկագրով 0.23 հա (3-րդ կարգ):

2) Սիզավետ գյուղի տարածքում -772.91հա, որից՝

ա. 668.0 հա արոտ, այդ թվում՝ 08-106-101-001-01 ծածկագրով 10.0 հա (3-րդ կարգ), 08-106-105-020-03 ծածկագրով 1.0 հա (4-րդ կարգ), 08-106-112-004-01 ծածկագրով 350.0 հա (3-րդ կարգ), 08-106-113-001-01 ծածկագրով 233.0 հա (4-րդ կարգ), 08-106-125- 008 ծածկագրով 2.0 հա (4-րդ կարգ), 08-106-0040-001- 72.0 հա (4-րդ կարգ):

բ. 53.91 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-106-112-064 ծածկագրով 6.09 հա (4-րդ կարգ), 08-106-112-079 ծածկագրով 7.0 հա (4-րդ կարգ), 08-106-112-082 ծածկագրով 3.71 հա (4-րդ կարգ), 08-106-112-083 ծածկագրով 4.61 հա (4-րդ կարգ), 08-106-113-03 ծածկագրով 21.0 հա (3-րդ կարգ), 08-106-121-002-01 ծածկագրով 15.0 հա (4-րդ կարգ), 08-106-121-002-06 ծածկագրով 6.54 հա (4-րդ կարգ):

գ. 51.0 հա խոտհարքներ, այդ թվում՝ 08-106-103-001-01 ծածկագրով 15.0 հա (4-րդ կարգ), 08-106-104-001 ծածկագրով 4.0 հա (4-րդ կարգ), 08-106-113-001-02 ծածկագրով 25.0 հա (4-րդ կարգ) ), 08-106-121-002-02 ծածկագրով 6.0 հա (4-րդ կարգ)

3) Բավրա գյուղի տարածքում -326.1 հա, որից՝

ա. 288.71 հա արոտ, այդ թվում՝ 126-001-01 ծածկագրով 58.39 հա (3-րդ կարգ), 127-013 ծածկագրով 35.49 հա (3-րդ կարգ), 135-001-01 ծածկագրով 93.22 հա (3-րդ կարգ), 136-001-01 ծածկագրով 100.0 հա (3-րդ կարգ), 002-001-01 ծածկագրով 1.61 հա (3-րդ կարգ):

բ. 37.39 հա խոտհարքներ, այդ թվում՝ 001-03-01 ծածկագրով 33.23 հա (2-րդ կարգ), 103-001-01 ծածկագրով 4.16 հա (2-րդ կարգ):

4) Կրասար գյուղի տարածքում -424.06 հա, որից՝

ա. 386,14 հա արոտ, այդ թվում՝08-058-006-001ծածկագրով 0,67 հա (3-րդ կարգ), 08-058-006-002 ծածկագրով 0,06 հա (3-րդ կարգ), 08-058-101-001-02 ծածկագրով 1,78հա (2-րդ կարգ), 08-058-101-001-03 ծածկագրով 2,80հա (2-րդ կարգ), 08-058-102-001-02 ծածկագրով 7,67հա (2-րդ կարգ), 08-058-102-001-03 ծածկագրով 0,03հա (2-րդ կարգ), 08-058-103-001-02 ծածկագրով 0,82հա (3-րդ կարգ ), 08-058-103-020 ծածկագրով 1,19հա (3-րդ կարգ), 08-058-103-027 ծածկագրով 2.93հա (3-րդ կարգ), 08-058-103-028-02 ծածկագրով 6,35հա (3-րդ կարգ), 08-058-104-015 ծածկագրով 1,08հա (3-րդ կարգ), 08-058-105-008 ծածկագրով 0,30հա (3-րդ կարգ), 08-058-106-001-01-01 ծածկագրով 10,95 հա (4-րդ կարգ), 08-058-107-001 ծածկագրով 0,46հա (3-րդ

կարգ), 08-058-107-044 ծածկագրով 0,22հա (3-րդ կարգ), 08-058-107-045 ծածկագրով 1,01 հա (3-րդ կարգ), 08-058-108-026-02 ծածկագրով 0,19հա (4-րդ կարգ), 08-058-108-026-03 ծածկագրով 0,10հա (4-րդ կարգ), 08-058-108-028 ծածկագրով 0,27 հա (4-րդ կարգ), 08-058-109-014-01-01 ծածկագրով 8,50հա (5-րդ կարգ), 08-058-110-086-01 ծածկագրով 1,94հա (3-րդ կարգ), 08-058-113-001-01 ծածկագրով 63,28հա (3-րդ կարգ), 08-058-113-009 ծածկագրով 0,11հա (3-րդ կարգ), 08-058-113-010 ծածկագրով 0,15հա (3-րդ կարգ), 08-058-114-010 ծածկագրով 1,55հա (2-րդ կարգ), 08-058-115-010 ծածկագրով 0,74հա (4-րդ կարգ), 08-058-116-004 ծածկագրով 0,92հա (4-րդ կարգ), 08-058-117-001ծածկագրով 5,34հա (4-րդ կարգ), 08-058-117-006 ծածկագրով 0,25հա (2-րդ կարգ), 08-058-118-001 ծածկագրով 0,38հա (2-րդ կարգ), 08-058-118-014 ծածկագրով 0,28հա (2-րդ կարգ), 08-058-119-001 ծածկագրով 0,47հա (2-րդ կարգ), 08-058-119-013 ծածկագրով 0,14հա(2-րդ կարգ), 08-058-119-049 ծածկագրով 0,07հա (2-րդ կարգ), 08-058-120-001 ծածկագրով 1,56 հա (3-րդ կարգ), 08-058-121-001-01 ծածկագրով 12,83հա (3-րդ կարգ), 08-058-122-001-01 ծածկագրով 154,27հա (3-րդ կարգ), 08-058-122-043 ծածկագրով 0,71հա (3-րդ կարգ), 08-058-123-001 ծածկագրով 5,32հա (2-րդ կարգ), 08-058-124-010 ծածկագրով 4,57հա (2-րդ կարգ), 08-058-124-012 ծածկագրով 0,37հա (2-րդ կարգ), 08-058-125-001 ծածկագրով
7,52հա (2-րդ կարգ), 08-058-126-001 ծածկագրով 3,96հա (2-րդ կարգ), 08-058-131-001-01 ծածկագրով 13,76հա (2-րդ կարգ), 08-058-143-001-01-01 ծածկագրով 2,0հա (3-րդ կարգ),08-058-144-001-01 ծածկագրով 55,84հա (3-րդ կարգ), 08-058-145-001 ծածկագրով 0,13հա (3-րդ կարգ), 08-058-146-001-02 ծածկագրով 0,29հա (3-րդ կարգ):

բ. 37.92 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-058-102-001-01-01 ծածկագրով 2.36 հա (2-րդ կարգ), 08-058-103-001-01-01 ծածկագրով 0,80 հա (2-րդ կարգ), 08-058-103-002-01 ծածկագրով 0,81 հա (2-րդ կարգ), 08-058-126-01 ծածկագրով 0,04 հա (2-րդ կարգ), 08-058-128-01-01 ծածկագրով 5,01 հա (2-րդ կարգ), 08-058-106-02-01 ծածկագրով 1,55 հա (3-րդ կարգ), 08-058-106-001-03-01 ծածկագրով 4,06 հա (3-րդ կարգ), 08-058-106-001-04-01 ծածկագրով 0,07 հա (3-րդ կարգ), 08-058-106-024 ծածկագրով 1.14 հ ա (3-րդ կարգ), 08-058-108-026-01 ծածկագրով 0,54 հա (3-րդ կարգ), 08-058-109-014-02 ծածկագրով 0,87 հա (5-րդ կարգ), 08-058-110-001 ծածկագրով 0,72 հա (3-րդ կարգ), 08-058-110-019 ծածկագրով 0,37 հա (3-րդ կարգ), 08-058-113-001-03-01 ծածկագրով 11,78 հա (4-րդ կարգ), 08-058-113-001-05-01-01 ծածկագրով 1,46 հա (4-րդ կարգ), 08-058-121-001-02-01 ծածկագրով 4.14 հա (4-րդ կարգ), 08-058-122-001-02 ծածկագրով 2,20 հա (4-րդ կարգ):

5) Փոքր Սեպասար գյուղի տարածքում -269.19 հա, որից՝

ա. 269.19 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-116-020-04 ծածկագրով 21.04 հա (4-րդ կարգ), 08-116-020-014 ծածկագրով 24.24 հա (3-րդ կարգ), 08-116-20-07 ծածկագրով 3.91 հա (5-րդ կարգ), 08-116-020-08 ծածկագրով 11.82 հա (5-րդ կարգ), 08-116-020-011 ծածկագրով 43.24 հա (3-րդ կարգ), 08-116-121-020-11 ծածկագրով 15.0 հա (3-րդ կարգ), 08-116-020-015 ծածկագրով 114.54 հա (3-րդ կարգ),08- 117-001-02 ծածկագրով 50,37 հա (3-րդ կարգ):

6) Թավշուտ գյուղի տարածքում – 103.68 հա, որից՝

ա. 22.9 հա արոտ, այդ թվում՝ 08-301-0003 ծածկագրով 22.9 հա (3-րդ կարգ):

բ. 80.78 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-101-001-02 ծածկագրով 2.35 հա (4-րդ կարգ) 08-101-0001-03 ծածկագրով 11.59 հա (4-րդ կարգ), 08-101-001-05 ծածկագրով 4.05 հա (4-րդ կարգ), 08-101-001-07 ծածկագրով 2.99 հա (4-րդ կարգ), 08-107-001-02 ծածկագրով 9.42 հա (4-րդ կարգ), 08-107-020-02 ծածկագրով 2.5հա (4-րդ կարգ), 08-109-001-02 ծածկագրով 5.03 հա (4-րդ կարգ), 08-112-001-02 ծածկագրով 1.17 հա (4-րդ կարգ), 08-113-001-02 ծածկագրով 8.82 հա (4-րդ կարգ),

08-112-001-10 ծածկագրով 1.19 հա (4-րդ կարգ), 08-301-001 ծածկագրով 25.6 հա (3-րդ կարգ), 08-111-001-02 ծածկագրով 6.07հա (4-րդ կարգ),

7) Ղազանչի գյուղի տարածքում -754.05 հա, որից՝

ա. 563.55 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-217-001-01 ծածկագրով 93.85 հա (3-րդ կարգ), 08-223-001-01 ծածկագրով 22.42 հա (3-րդ կարգ), 08-223-001-04 ծածկագրով 1.24 հա (4-րդ կարգ), 08-223-001-05 ծածկագրով 7.13 հա (4-րդ կարգ), 08-222-001-02 ծածկագրով 103.6 հա (4-րդ կարգ), 08-222-001-04 ծածկագրով 16.37 հա (4-րդ կարգ),08-222-001-03 ծածկագրով 34,7 հա (4-րդ կարգ), 08-222-001-03 ծածկագրով 33.65 հա (4-րդ կարգ), 005-001-05 ծածկագրով 4.65 հա (4-րդ կարգ), 08-222-001-02 ծածկագրով 27.47 հա (4-րդ կարգ), 08-222-001-03 ծածկագրով 4.2 հա (4-րդ կարգ), 08-219-001-03 ծածկագրով 7,23 հա (5-րդ կարգ), 08-219-001-02 ծածկագրով42,34 հա (3-րդ կարգ), 221-001-02 ծածկագրով 37,62 հա (3-րդ կարգ), 218-001-03 ծածկագրով 17,21 հա (2-րդ կարգ), 218-001-02 ծածկագրով 11,42 հա (2-րդ կարգ), 214-001-02 ծածկագրով 15,75 հա (2-րդ կարգ), 213-001-03 ծածկագրով 12,48 հա (4-րդ կարգ), 213-001-02 ծածկագրով 46,14 հա (4-րդ կարգ), 213-001 ծածկագրով 4,7 հա (4-րդ կարգ),102-001-03 ծածկագրով 9,88 հա (4-րդ կարգ), 102-001-05 ծածկագրով 9,5 հա (4-րդ կարգ)

բ. 190,5 հա խոտհարքներ, այդ թվում՝ 08-102-001-01 ծածկագրով 67.97 հա (3-րդ կարգ), 08-220-001-04 ծածկագրով 104.5 հա (3-րդ կարգ), 08-201-001 ծածկագրով 11.94 հա (3-րդ կարգ) ), 08-104-001 ծածկագրով 6.09 հա (4-րդ կարգ):

8) Մեծ Սեպասար գյուղի տարածքում -361.48 հա որից՝

ա. 361.48 հա արոտ, այդ թվում՝ 109-001-01 ծածկագրով 200.58 հա (2-րդ կարգ), 110-018-02 ծածկագրով 160.90 հա (2-րդ կարգ):

9) Սարագյուղ գյուղի տարածքում -56.35 հա որից՝

ա. 36.6 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-101-001-05 ծածկագրով 8.42 հա (3-րդ կարգ), 08-103-045-02 ծածկագրով 8.22 հա (4-րդ կարգ), 08-107-137 ծածկագրով 3.1 հա (3-րդ կարգ), 08-107-151-02 ծածկագրով 1.67 հա (3-րդ կարգ), 08-107-154-02 ծածկագրով 2.49 հա (3-րդ կարգ), 08-107-175-03 ծածկագրով 2.68 հա (4-րդ կարգ), 08-107-175-09 ծածկագրով 2.68 հա (2-րդ կարգ), 08-107-175-11 ծածկագրով 7.34 հա (4-րդ կարգ),

բ. 19,75 հա խոտհարքներ, այդ թվում՝ 08-107-175-01 ծածկագրով 12.63 հա (2-րդ կարգ), 08-107-175-08 ծածկագրով 7.12 հա (3-րդ կարգ):

10) Ջույգաղբյուր գյուղի տարածքում -775.71 հա, որից՝

ա. 713.98 հա արոտ, այդ թվում՝ 08-301-001-01 ծածկագրով 166.64 հա (2-րդ կարգ), 08-303-001 ծածկագրով 44.59 հա (3-րդ կարգ), 08-304-001 ծածկագրով 65.2 հա (3-րդ կարգ), 08-305-024-01 ծածկագրով 99.03 հա (3-րդ կարգ), 08-307-001-01 ծածկագրով 185.31 հա (3-րդ կարգ), 08-308-001 ծածկագրով 65.68 հա (2-րդ կարգ), 08-309-001-01 ծածկագրով 64.21 հա (2-րդ կարգ), 08-313-015-01 ծածկագրով 21.39 հա (2-րդ կարգ), 08-321-001 ծածկագրով 1.93 հա (3-րդ կարգ):

բ. 61.73 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-318-126 ծածկագրով 53.3 հա (2-րդ կարգ), 08-325-001-03 ծածկագրով 8.43 հա (4-րդ կարգ):

11) Կարմրավան գյուղի տարածքում – 3.69 հա, որից՝

ա. 1.4 հա արոտ, այդ թվում՝ 08-112-025-01 ծածկագրով 1,4 հա (2-րդ կարգ),

բ. 1.39 հա անջրդի վարելահող, այդ թվում՝ 08-0121-0004-01 ծածկագրով 1.39 հա (3-րդ կարգ),

գ. 0,90 հա խոտհարք, այդ թվում՝ 08-110-010-01 ծածկագրով 0.90 հա (2-րդ կարգ),

2. Մրցույթում մեկ հեկտար 2-րդ կարգի արոտի մեկնարկային վարձավճարը հաստատել 4770 դրամ, 3-րդ կարգինը՝ 3500 դրամ, 4-րդ կարգինը՝ 2040 դրամ, 5-րդ կարգինը՝ 675 դրամ, 2-րդ կարգի անջրդի վարելահողինը՝ 5790 դրամ, 3-րդ կարգինը՝ 3810 դրամ, 4-րդ կարգինը՝ 2340 դրամ, 5-րդ կարգինը՝ 1230 դրամ, 2-րդ կարգի անջրդի խոտհարքինը՝ 5625 դրամ, 3-րդ կարգի խոտհարքինը՝ 4020 դրամ, 4-րդ կարգի անջրդի խոտհարքինը՝ 2415 դրամ:

3, Սույն որոշման 1-ին կետում նշված վարելահողերը օգտագործման են տրամադրվում 25 տարի ժամկետով, արոտավայրերն ու խոտհարքները՝ 3 տարի ժամկետով:

**Կողմ (8)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վաղինակ Աբրեյան
Համլետ Գրիգորյան
Միշա Երանոսյան
Սրապ Հարությունյան
Արմեն Մարտիրոսյան
Հրանտիկ Մելիքյան
Մկրտիչ Սարգսյան
Գագիկ Սարիբեկյան

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* **Ա. ԱԼՈՅԱՆ**

2018 թվականի մարտի 30
Գ. Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 9 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Փոքր Սեպասար-Մ1 ճանապարհահատվածի կոպճապատման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու և մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը:

| **Կողմ (8)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Վաղինակ Աբրեյան | | |
| Համլետ Գրիգորյան | | |
| Միշա Երանոսյան | | |
| Սրապ Հարությունյան | | |
| Արմեն Մարտիրոսյան | | |
| Հրանտիկ Մելիքյան | | |
| Մկրտիչ Սարգսյան | | |
| Գագիկ Սարիբեկյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱԼՈՅԱՆ

ASHOTSK MUNICIPALITY

2018 թվականի մարտի 30
գ. Աշոցք